



# Վարձակալների վարձավճարների և վարձավճարի չվճարման համար վտարումների ժամանակավոր դադարեցմանն առնչվող մտահոգությունների հասցեագրում

ԱՄՆ-ի Բնակարանաշինության և քաղաքային զարգացման վարչությունը (HUD) մշակել է այս թռուցիկը՝ տրամադրելու Բնակարանային ընտրության վաուչեր (HCV), պետական կացարան և Չափավոր վերականգնման 8-րդ բաժնի (Mod Rehab) մասնակիցներին կորոնավիրուսի համավարակի վարձավճարի վճարման մասին կարևոր տեղեկատվություն և ռեսուրսներ ազգային մակարդակով արտակարգ դրության ընթացքում:

## Ինչի՞ մասին է վտարումների ժամանակավոր դադարեցումը:

**Վտարումները, որոնք պայմանավորված էին վարձավճարի չվճարմամբ և դրանց առնչվող վճարներով/գանձումներով**

**ժամանակավորապես դադարեցվել են:** Սա գործում է HUD-ի օժանդակության բոլոր մասնակիցների համար սկսած 2020 թվականի մարտի 27-ից մինչև 2020 թվականի հուլիսի 24-ն ընկած ժամանակահատվածում<sup>1</sup>: Չնայած Ձեր Պետական կացարանի հարցերով զբաղվող կառույցի (PHA) ընդունելությունները և Շարունակելի զբաղվածության վերաբերյալ քաղաքականությունները (ACOP) և/կամ Վարչական պլանը կարող են չթափանցվել, ինչպես նաև տեղյակ լինել, որ վարձավճարով պայմանավորված վտարումների ժամանակավոր դադարեցումը գործում է:

## Վարձավճար կատարելիս ունե՞ք խնդիրներ:

- **Վաուչերի և պետական կացարանի մասնակիցներ.** Եթե կորցրել եք Ձեր աշխատանքը կամ եկամտի նշանակալի կորուստ եք ունեցել, ապա կացարանային հարցերով զբաղվող կառույցից **հայցեք միջանկյալ վերանայում** որբան հնարավոր է շուտ: Ձեր վարձավճարը կարող է ճշգրտվել՝ արտացոլելով եկամտի փոփոխությունը, կամ կարող եք իրավասու լինել ֆինանսական դժվարությունից ազատման համար: Ձեր կացարանային հարցերով զբաղվող կառույցը կարող է նաև տեղյակ լինել տեղական այլ ռեսուրսների մասին:
- **Միայն վաուչերի մասնակիցները՝ Ամփոփապես կապվեք Ձեր տանտիրոջ հետ:** Հնարավորինս շուտ կապ հաստատեք, որպեսզի քննարկեք վճարման հավանական ժամանակացույցները կամ հարմարությունները: Եկամտի կորստի և դրանից բխող միջանկյալ վերանայման պատճառով Ձեր վարձավճարի ճշգրտումը կարող է հետադարձ ուժ ունենալ: Ծշտեք PHA-ի և Ձեր տանտիրոջ հետ՝ արդյոք ստանալու եք վարկ նախորդ ամսվա համար:

## Ել ի՞նչ է անհրաժեշտ իմանալ:

- **Վարձավճարն ուժի մեջ է** այս ժամանակահատվածում, և չվճարվելու դեպքում այն կկուտակվի:
- Ձեր տանտերը և PHA-ը չեն կարող նախաձեռնել վարձավճարի չվճարմամբ պայմանավորված նոր վտարման գործողություն, և չպետք է ստանաք վարձավճարի չվճարմամբ պայմանավորված բնակարանն ազատելու ծանուցում 2020 թվականի մարտի 27-ից մինչև 2020 թվականի հուլիսի 24-ն ընկած ժամանակահատվածում:
- Ձեր տանտերը և PHA-ը չեն կարող գանձել որևէ ուշացած վճար կամ կուտակել գանձումները/վճարները, և Ձեր աջակցությունը չի կարող դադարեցվել 2020 թվականի ապրիլ, մայիս, հունիս, հուլիս ամիսների ուշացած վարձավճարի համար:
- Եթե ուշացրած վարձավճար ունեք, ապա վտարումների ժամանակավոր դադարեցման ավարտից հետո. **Վաուչերի մասնակիցները** պետք է անմիջապես բանակցեն իրենց տանտիրոջ հետ՝ սահմանելու չվճարված վարձավճարի մարման պահանջները: Այլապես, Ձեր տանտերը կարող է վտարման ծանուցում ներկայացնել: **Պետական կացարանի մասնակիցները** պետք է աշխատեն PHA-ի հետ՝ վճարելու չվճարված վարձավճարը միանվագ եղանակով կամ սահմանելու մարումների մասին համաձայնագիր: Այլապես, Ձեր աջակցությունը կարող է դադարեցվել և/կամ PHA-ը կարող է վտարման ծանուցում ներկայացնել:
- Վարձավճարի չվճարմամբ պայմանավորված և մինչև 2020 թվականի մարտի 27-ը դատարան ներկայացրած վտարումները կարող են շարունակվել, եթե նահանգի կամ տեղական օրենքների հետ որևէ հակասություն չկա:
- PHA-ը կամ Ձեր տանտերը կարող է առաջվա նման դադարեցնել աջակցությունը և վտարել կացարանից դեղամիջոցների չարաշահման, քրեական գործողության, վարձակալության խախտումների, փոքր կրկնվող խախտումների, այլ հիմնավոր պատճառների և այլնի դեպքում:
- HUD-ը չի միջամտում կամ մասնակցում վտարման վարույթներին: Եթե կարծում եք, որ Ձեզ սխալմամբ են վտարում, ապա կապվեք Ձեր իրավական աջակցությամբ զբաղվող տեղական կազմակերպության կամ սոցիալական ծառայության գործակալությունների հետ: Եթե Վաուչերի մասնակից եք, նաև կարող եք կապվել Ձեր տեղական PHA-ի հետ:



<sup>1</sup> Այն սահմանվել է Կորոնավիրուսի օգնության, մեղմացման և տնտեսական անվտանգության մասին օրենքի՝ 2020 թ. CARES օրենք, 4024-րդ բաժնում (Հանրային օրենք 116-136):